ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 09-ը հուլիսի 2019թ.

ժամը 12⁰⁰

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ԿԾ և ՁԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖ ԾԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

---

(Մ. Հոխեյան)

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի(ների)՝ բաց մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր(իրենց) համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

---

(Մ. Հոխեյան)

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Արակ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթին «Աբակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

- «Աբակ» ՍՊԸ կողմից ներկայացված 17.09.2018թ կնքված N ԿՄՊԳՀԾՁԲ-18/05 և 24.10.2018թ. կնքված N ԵԷՏ-ԳՀԱԾՁԲ-18/17 ծածկագրերով պայմանագրերի հետ կցված չէին պայմանագրերի անբաժանելի մաս կազմող հավելված N 1-ը /ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ/: Անհրաժեշտ էր ներկայացնել վերը նշված պայմանագրերը ամբողջությամբ:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Աբակ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել m.hokheyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

«Աբակ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և սահմանված ժամկետում շտկեց արձանագրված անհամապատասխանությունները, ինչնել հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթին գնահատող հանձնաժողովը որոշեց «Աբակ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել բավարար:

1.2 *09.07.2019թ.* հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Աբակ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱԾՁԲ-10/8» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

______________________________

(Մ. Հոխեյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՇՁԲ-10/8» ծածկագրով բաց մրցույթի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ա. Սաֆարյան

Գնումները համակարգող՝ Մ. Հոխեյան